

ՁԵՌԱԳՐԱԿԱՆ

**«ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ»
ՃԱՌԵՐԻ ՆՈՐԱԳԻՏ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ**

«Լոնդոնի գրադարանում» յայտնաբերուած, Կարկաթայում՝ Աւետ Զընթլումեանի տպարանում 1813 թ. տպագրուած «Յաճախապատում»-ը Կ. Պոլսի առաջին հրատարակութեան յիման վրայ դառնում է երկրորդ ամենահին տպագրութիւնը:

Որպէսզի ոչ մի կասկած չլինի գրքի հրատարակութեան վայրի, թուականի եւ տրպարանի վերաբերեալ, օգտակար կը լինի մէջբերել ամբողջութեամբ «Յառաջաբանութիւնը», եւ «Յիշատակ մատենիս»-ի կրճատուած հատուածը՝ 1737 թ. տպագրութեան համեմատութեան համար:

Տիտղոսաթերթ

Գիրք որ կոչի ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ ասացեալ Սբ. Հօրն մերոյ երանելոյն Գրիգորի Լուսաւորչին: Յորում պարունակին ճառք յոգնապատումք քսան և երեք: Վասն անհաս էութեան Աստուծոյ. և խնամոցն և սիրոյն, որ առ ստեղծուածս: Եւ վարուց ուղղութեան և գործոյն հատուցման:

Առաջին տպագրումը գրոյս եղեալ է ի Կոստանդնուպօլիս քաղաքի ի թուին հայոց 1186 [=1737]:

Իսկ այժմ վերստին տպագրեցաւ արդեամբք եւ ծախիւք ի Քրիստոս հանգուցեալ Աղայ Սարգիս Տէր Յովհաննէսեանին, եւ յատուկ օգնական լինողաց մեր ազնէից:

Աշխատասիրութեամբն Զընթլում Աւետեանին: Ի հայրապետութեան Սբյ. էջմիածնի Տն. Եփրեմի Հայոց կաթողիկոսի: Յամի Տեառն ... 1813: Ի ԿԱԼԿԱԹԱՅ ի տպարանի Աւետ Զընթլումեանի:

Յառաջաբանութիւն

«Որպէս ցանկալին այն, որոք ի վաղուց հետ է առ ի գիւտ որոյ ընդ բազում ժամանակ երկար աշխատութեամբ՝ դեգերեալ իցէ, ընդ ստանալն իսկոյն ժողովէ զսիրելիս և զբարեկամս իւր՝ ի խնդակցութիւն ինքեան այսպէս և զպատուական մատեանս գտենչալին հանգուցեալ հօրն իմոյ, աղայ Սարգսիմ՝ նորոգ տպագրութեամբ լոյս ածեալ՝ տեսանելով, զսիրելի ազգիդ իմ. և զբընաւ դասս ուսումնատենչից առ ի լինիլ հրճուակից իմոյս նուաստութեանն:

Արդ տեսանելով հանգուցեալ հօրն իմոյ՝ զի ի սմանէ յոյժ սակաւ գտան իւր ի այս կողմանցս՝ վասն որոյ մեծաւ փափագանօք ցանկացաւ արդեամբք իւրով տալ տպագրել զսա. բայց մինչ չեէր աւարտեալ, օրհասն մահուն կախեալ երանելոյն՝ փոխեցաւ ի կենաց. և յիշելով իմ զբանն թէ՛ որդին պարտական է հատուցանել զվարձ ծնողին փութացայ ի կատար հասուցանել սոյն քաղցրագոյն մատեանս, զոր ահա շնորհօք սուրբ հոգւոյն յանկ ելեալ աւարտեցաւ: Ուրեմն հայցեմ ի ձէնջ զի սիրով ընկալեալ վայելեսչիք զպտղաբերութիւնն սորին, որպէս զի փափագ հանգուցեալ հօրն իմոյ և ջանք և աշխատանօք մերոյ նուաստութեան, մի լինիցին իբրև զսերմանս հեղձուցեալս իծոց երկրի, այլ եկեսցեն ի հունձս որպէս զի որ սերմանէն և որ հնձէն առ հասարակ ցնծասցեն:

Զպատուականութիւն և զպիտոյութիւն գրքոյս, ոչ է կամ մեր ճառել լիապէս, քանզի ուշիմ. ընթերցողքն իմանալ ունին ի գրութենէ զի թէպէտ՝ նուրբիմաց բանիւ վարդապետէ, սակայն ի ձեռն զարմանալի ասացուածոց՝ հաղորդէ ամենեցուն զբազմազան խրատս, տալով զշնորհս {Բ} իւրաքանչիւրոցն ըստ շափու անօթոց իւրեանց:

Արդ որք վայելէք զսա և շահիք ի բարի խրատուց սորին յիշեցէք ի շերմեռանդ աղօթս ձեր՝ զհանգուցեալ հայրն իմ Աղայ Սարգիս Տէր Յովաննիսեանն, որ նախկին պատճառ է վերստին տպեցան սորին. ընդ նմին և մեզ՝ հանդերձ մերացնօքն յիշել մի մոռանայք».

Ի Կալկաթայ

Յամի տեառն 1813,

և փոքր 198,

Դամայ 20¹:

Որ եմ ամենիցդ՝ պատրաստակամ և խոնարհ ծառայ Յովաննիսեան Սարգիսեան

Յիշատակարան Մատենիս

[Էջ. գ] «Օժանդակութեամբ և շնորհիւ ամենասուրբ Երրորդութեան Հօր և Որդուց և Հոգւոյն սրբոյ, և բարեխօսութեամբ Ամեներանուհւոյ կուսին Մարիամու յանգ ելեալ՝ աւարտեցաւ տպագրումն այս գեղեցկաբան և երջանիկ մատենիս ասացեալ Սըրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, որ պարունակի յինքեան ազգի ազգի ճառք, վասն անբաւ էութեան բարերարին Այ և նախախնամական յատուկ սիրոյն, որ առ ստեղծուածս և ուղղութիւն վասն վարուց մարդկան, և աշխարհի գործոց նոցին հատուցման, այլ զանազան օգտաշահ խրատք: Եւ զի սուրբ հայրս՝ մեր որ յատուկ երախտաւորէ ազգիս մերոյ նախապէս ամենագովելի վարիւքն պերճացեալ ամենամեծ գովութեանց արժանի գտաւ համբերեալ անտանելի և դառնկակիծ շարչարանացն, զոր լիապէս պատմէ հաւատարիմ ատենադպիրն Տրդատայ Ագաթանգեղոս, զի գրեթէ այնքան գերազանցեցաւ մինչ զի եղև անպատում բարեաց գործունեայ, և ազգի մերում լուսաւորիչ շնորհեցաւ և քաջ գերափայլ աստեղ, որ ի հաստատութեան գեր ի վերոյ սքանչելապէս փայլեցաւ համօրէն առաքինութենէ և շնորհաց սորին ձիրք, ի անմատոյց փառս առաջնորդեալ անպատմելի երանութեան հասուցին: Եւ սովաւ լուսաւորեցաւ խաւարն անգիտութեան զկոռապաշտութիւն և ծագեցաւ լոյսն շնորհաց, և աստուծո՞ծանօթութեան և միանգամայն լուսաւորեցաւ Հայաստան աշխարհս: Երկրորդապէս ոչ բաւականացաւ սէրն սուրբ հօրն մերոյ դէպ առ մեզ, այնքան անհամեմատ ձգնութեամբ, մինչ զի և զայս մատեան՝ իբրև յատուկ սիրոյ ցոյցք աւանդեաց և շնորհեաց մեզ անշնչելի յիշատակ իւր հայրական գթոյն:

Արդ որք հանդիպիք ընթեռնելով և վայելելով [Էջ. դ] զքաղցրագոյն մատեանս այս, յիշեսցիք ի մաքուր յաղօթս ձեր օժանդակքն գործարանիս իմոյ հանդերձ կենդանեօք և հանգուցելովքն որք յանուանէ յիշեցեալ կան ի ներքնոյ: Նաև յիշեսցիք ի մաքուր յաղօթս ձեր զարժանին յիշեցման զպատճառ տպագրութեան սորին ի Քրիստոս հանգուցեալ Աղայ Սարգիս Տէր Յովաննիսեան, և կենդանի զհաւատարիմ կողակիցն իւր յարգոյապատիւ Տիկին Մարամջանն և անդրանիկ ժառանգն իւր յարգելի Աղայ Յովհաննիսեան, և պատուելի կողակից նորին տիկին Եղիսաբէթ Յովհաննիսեանն, ընդ նմին և զերեսին հարազատ որդիքսն Աղայ Սարգսին, Աղայ Կարապետ, Բէկտան, և Մար-

¹ «Ագարիա Զուղայեցու թուականը» (1813-1616= 197): Դամայ [թուրք. dama] Տէս Աբրահամեան Ա. Գ., Հայ գրի եւ գրչութեան պատմութիւն, Երեւան, 1959, էջ. 271-76, Nersessian Vrej Nerses, 'The various dating systems employed by Armenian scribes in the colophons of manuscripts'. *Semitica et Classica International Journal of Oriental and Mediterranean studies*, vol. VIII, 2015, pp. 199-210.

տիրոսն. և Քրիստոս հանգուցեալ Աղայ Մկրտիչ Սարգսեանին և զայլ համայն ընտանեաց՝ և արեան առու մերձաւորացն»:

Այնուհետեւ բերուում է գրքի տպագրութեան ծախսերը, հոգացողների ցուցակը [17 անուն ազգանուն]։ «Սոքա եւ անուանք Ազնիւ Պարոնացն ոք եւ օժանդակ ծախսոցն Տպարանիս»²։

«Հուսկ յետոյ ի վախճանի յիշեսչիք զաշխատաւոր գործարանիս յետնեալ ծառայն ձեր, Ջընթլում Աւետեանս, որ հարագատօրէն աշխատութեամբ տքնիմ ի այս գործ. (ուստի եւ հայցեմ եթէ սխալանք ուրեք գտանիցին ի սմա հայելով զմիայնակութիւն և զծանրութիւն պաշտօնի իմոյ ներումն շնորհեսչիք) այլ և մի զանց առնիցէք յիշել զանդրանիկ որդեակն իմ, և զտէր տպարանիս Աւետ Ջընթլումեանն. զոր պատանեակ հասակաւ իւրով՝ ոչ սակաւ աշխատի ի վերայ սոյն այս գործոյ, ընդ նմին և զայլ մասնակից աշխատաւորս յիշման արժանի առնելով՝ դուք սիրելիքդ իմ, վարձս բարեաց պարգևողէն ընկալչիք»։

Արդ զտուրան սիրելի ազգիդ իմոյ, և զուարթամիտ առատաձեռնութեամբ յայս գործս ազգօգուտ ինքնակամ օգնողացն ամենամեծն Աստուած՝ ի փառս իւր ընկալցի զբարի նպատակ յուսոյ և ակնկալութեանսն ամենիցն, ի յանկ հանցէ. և բարի յիշատակս իւրաքանչիւրոցն ի յանջընջելի երանական մատենի իւրում գրեսցէ. և համայն հաւատացեալ քրիստոնէիցն՝ զսէր և զմիաբնութիւն պարգևելով, յարածամ ի յողջութիւն և յաջողութիւն. պահեսցէ։ Եւ ձեզ բարի մտութեամբ յիշողացդ մասն բարեաց պարգևեսցէ Ամէն։

Եւ ես մընամ ձերում յարգութեան միշտ
պատրաստական և ամենախոնարհ ծառայ

Ջընթլում Աւետեան

Գրքի վերջին էջի վրայ (324) Ջընթլում Աւետեանը տպել է մի հատուած 1737 թ. «Յայտակարգութիւն ինչ յաղագս հոգելից սրբոյ մատենիս» առաջին տպագրութիւնից.

«Եւ սոյն այս գեղեցիկ աստուածային գանձուս՝ ցանկացօղ եղեալ բարեպաշտօն և հոգեսէր մահտեսի Յակոբ Ամունայն, որ է հաւատարիմ պաշտօնատար և միաբան ի դուռն սրբոյն Յակոբայ մեծի աթոռոյն ի սուրբն սաղիմ։ Եւ իւր արդեամբքն ետ տպեալ զսա ի յիշատակ բարի՝ հոգւոյ իւրոյ, ի յօգուտ հոքւոր եղբարց, և պատիւ փառս միոյն աստուծոյ։ Որոյ բարի յիշատակն օրհնութեամբ եղիցի. և վարձս բարեաց հատուսցէ նմա աստուած ի հոգի և ի մարմին. ի կեանս և ի մահ։ Նաև ծնողացն նորին հանգուցեալ Կարապետին և մահտեսի Կատարին. և ամենայն արեանառու ննջեցելոցն ի Քրիստոս։ Բարեխօսութեամբ սրբոյն Գրիգորի, և սուրբ որդւոց և թոռանց նորին. և Դանիէլի սուրբ ծերունւոյն, և ամենայն ընտրելոցն աստուծոյ ամէն։

«Եւ արդ՝ ողորմութեամբն Այ և բարեխօսութեամբ սրբոյն Մինասայ զօրավարին, տպեցեալ աւարտեցաւ սուրբ գիրքս ի թվին Հայոց 1186 [=1737] Մայիսի 20»։ Ի հայրապետութեան սրբոյն էջմիածնի Թէքիրտաղցի Տեառն Աբրահամու Սրբազան Կաթողիկոսին Ամենայն Հայոց։ Եւ ի Պատրիարքութեան սրբոյն Երուսաղէմի և Կոստանդնուպօլսոյ Տեառն Գրիգորի և Տեառն Յօհաննու սրբազան և Աստուածաբան վարդապետացն։ Ի տպարանի Կարապետի որդւոյ Մահտեսի Աստուածատուրին և որդւոյ նորին տիրացու Յօհաննիսին ի Կոստանդնուպօլիս քաղաքի»։ ...Յիշեսչիք հուսկ յետոյ զվերգրեցեալ տպագրօղն սորին զմահտեսի Աստուածատուրն և ծնօղսն իւր զԿարապետն և զՄարիամն. և զորդի նորին ուշամիտ զտիրացու Յօհաննէսն և զաշ-

² Հմմտ. «Ժամագիրք համառօտ վասն մանկանց...», Դայթեան Հ. ՀԳ, համար 189, էջ. 49:

խատաւոր մշակն տպագրատանն զՎանեցի Տէր Աստուածաբանի որդի Սարուխանն: Եւ տուողն բարեաց աստուած յիշեսցէ առ հասարակ զամենեանեան յարքայութիւն իւրում: Ամէն»³:

Տպագրութեան թուականի ստոյգութիւնը հաստատելու համար, յիշում է օրուայ կաթողիկոսը՝ Թէքիրտաղցի Աբրահամ [Աբրահամ Ա Կրետացի, 1734-1737], Երուսաղէմի Պատրիարք Գրիգոր [Զ Շղթայակիր, 1715-1749], Կ. Պոլսի Պատրիարք՝ Յօհաննէս [Կոլտ Բաղիշեցի, 1715-1741], Պոլսոյ տպարանատէրերից ամենաբեղուն Մահտեսի Աստուածատուր դպիր [1700-50] եւ իր շառաւիղներից «Կարապետի որդի Աստուածատուր և իր որդի տիրացու Յօհաննիսի»-ը:

Աւետ Զընթլումեանի «Յանախապատում»-ի հրատարակումը Կալկաթայում, դառնում է այս գործի երկրորդ տպագրութիւնը, իսկ 1824 թ. Կ. Պոլսում՝ «Տպեալ Վերստին» հրատարակութիւնը, Եփրեմ Ամենայն Հայոց Կաթողիկոսի (1809-1830), Երուսաղէմի Պատրիարք Գաբրիէլ [Նիկոմիդացի] (1819-1840) եւ Կ. Պոլսի Կարապետ [Պալաթցի, 1823-1831] պատրիարքութիւնների օրօք դառնում է երրորդը:⁴

Մինչդեռ Կալկաթայում հրատարակուած տարբերակի մէջ հրատարակիչը տեղադրում է առաջին տպագրութեան յիշատակարանի միայն մի փոքրիկ հատուածը, 1824 թ. տարբերակը պարունակում է առաջին հրատարակութեան տեքստի գոհաբանական մասը, իսկ այն հատուածը, որ վերաբերում է գրքի նոր տպագրութեան հանգամանքներին, տեղեկութիւնը տարբերում է: Առաջին հրատարակութեան «Յայտարարութեան» մէջ, գրքի պատուիրատուն, «Եւ սոյն այս գեղեցիկ աստուածային գանձուս ցանկացեալ եղեալ բարեպաշտօն և հոգասէր մահտեսի Յակոբ Ամուճայն, որ է հաւատարիմ պաշտօնատար և միաբան ի դուռն սրբոյն Յակոբայ»⁵ իսկ 1824 թ. տպագրութեան մէջ, գրքի պատուիրատուն ոչ թէ Յակոբ Ամուճայնն է, այլ. «այրն ազնուական մահտեսի Աբրահամ բարեպաշտ ամիրայն ... զծածկեալ զանձս աստուածային՝ որ ի նմա, յերևան ածել՝ և ի յայտ բերել՝ ետ արձանացուցանել ի տիպ իւրով իսկ արդեամբ (որպէս գրեցաք ի դուռն այսր մատենի) ի սեփական իւր գործարանի իբրև արձան կենդանի ի յիշատակ իւր ինքեան և ի շահ հոգեսիրաց նաև ի պատիւ ի սրբոյն և ի փառս միոյն աստուծոյ ... Ընդ նմին և ծնողի նորին առն բարեպաշտի Թերզեանց սարաֆ հանգուցեալ մահտեսի Յօհաննիս, և յարգի եղբօր նորին հանգուցեալ Ղազարին, նաև այնոցիկ՝ որք այժմ են կենդանի, բարեպաշտուհի մօր նորին մահտեսի Աննա տիկնոջն, և եղբօր նորին մահտեսի Երամին և եղբօր որդւոց նորին՝ Գասպարին, Սահակին, մահտեսին Նորուկին, և Գէորգին, և այլ ամենայն կենդանեաց և ննջեցելոց նորին: Բարեխօսութեամբ սրբոյն Գրիգորի, և սուրբ որդւոց և թոռանց նորին, և Դանիէլի սուրբ ծերունւոյն, և ամենայն ընտրելոցն Աստուծոյ ամէն»⁶:

Այս տպագրութեան բովանդակութիւնը մի շարք տեղեր հետեւում է առաջին հրատարակութեան կառուցուածքին, բայց նաև ունի տարբերութիւններ: Առաջին տպագրութեան բովանդակութիւնը հարազատ է Մլիհոյ ուխտի Տէր Ստեփաննոս Արքեպիսկոպոսի գրել տուած ձեռագրին, որը գտնւում էր «գրեանս ի սուրբ վանս Մլիհոյ»: Պատկերացում կազմելու համար, առաջին հրատարակութեան բովանդակութեան ցանկն աւելորդ չէր լինի տալ այստեղ.

³ Ոսկանեան Ն., ՀԳ, 1512-1800 թ. հմմտ. 439, էջ. 343:

⁴ Ղազիկեան Ա., Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան, էջ. 463-65, Գալթեան Հ., ՀԳ 1800-1850, էջ 118-119:

⁵ Յակոբ մահտեսի Ամուճայն Հալեպցի (մահ. 1843). յիշում է Մկրտիչ Եպս. Աղաւունին իր՝ «Միաբանք եւ Այցելում Հայ Երուսաղէմի» եւ նրա հրատարակած գրքերի շարքին յիշում 1737 թ. «Յանախապատում»-ը, Երուսաղէմ, 1920, էջ 315:

⁶ Nersessian V., Catalogue, նշուած աշխ. no. 386, էջ. 108, [17021. d. 11]:

- Վարդապետութիւն Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի:
- Ճառ Յանախապատում... Ա.ԻԳ(3-290):
- Յանկ իգ [23] նաոից, որ ի սուրբ մատենիս արարեալ սրբոյն հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, (291-293):

Յանկն աւարտուում է այս յատարարութեամբ.

«Այս ցանկ՝ ըստ իւր բնական գրուածոյն է: Իսկ ի վճարման առաջի կայ ներբողեանցդ՝ ի գաղափարի մերում շարադրեալ կայ ի պատուելի Պաղտասար դպրէ՝ և այլ ցանկ ըստ այբբենական կարգին: Ուստի և մեք եդաք ըստ նմին զոմանս ի բանից գլխաւորաբար յիշեցեալս ի մէջ ճառիցդ՝ կամ թէ ի գոյն իսկ ի ներբողեանսդ թղթահամարովն ի յայտ բերելով»:

- Յօհաննիսի վարդապետի Եզնկացոյ, Ասացուած Ներբողեան Գովեստ ի սուրբ Լուսաւորչն Հայոց մեծ Գրիգորիոս (294-345):

Տեքստի աւարտին տեղադրուած է այս ծանուցումը:

«Ի թուականիս Հայոց ՁԼԷ [737 + 551= 1228] գրեցաւ ճառս և ընծայեցաւ Հայաստանեայց Սուրբ Եկեղեցոյ»⁷:

1824 թ. Կ. Պօլսի հրատարակութեան բովանդակութեան ցանկը այս է.

- Դրուատ գովեստի յորդիսն և ի թոռունս սրբոյն Գրիգորի մեր Լուսաւորչին, ի Սուրբն Արիստակէս, և ի Վրթանէս, և ի Յուսիկն, և ի Գրիգորիս նաև ի Դանիէլ (346- 370):

- Շարական Որդոց և Թոռանց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին դկ. *«Աստուծային հաւատոյ»* և *«Սուրբ որդիք և թոռունք՝ սուրբ հօրըն մերոյ»* (371):

- Ի սրբազան Հայրն մեր երանելին Գրիգորիոս Պաղտասար Պարտաւոր դպրի ասացեալ ի թուին 1158 [=1709]:

- «Ի Պաղտասարէ ումեմնէ բան գովեստական շինեցեալ ոտամբ չափով առ սուրբ Գրիգորիոս Լուսաւորչն Հայոց», (372-383):

- Յայտարարութիւն ինչ յաղագս հոգելից սրբոյ մատենիս (384-386):
- Յանկ գլխաւոր իմացուածոց հոգելից սրբոյ մատենիս (387-400):
- «Ջաշխատօղ ցանկիս, և զառաջին սրբագրօղ սրբոյն մատենիս զՊաղտասար պատուելի դպրին ընդ որում և զիս զայժամեան սրբագրօղ չնչին ծառայս ձեր զԹագուոր Ասլանեան թարմատար դպիրս՝ ով եղբարք բանասէրք յիշեսցիք ի տէր հանդերձ ծնողովք մերովք և ամենայն անջեցելովք և ողջ լերով: Ամէն»:

*Ներել մաղթեմ աղերս արկեալ
որ ինչ ի սմա սըխալ գըտեալ
Ոչ գիտելոցն և ոչ տեսեալ
կամ ըստ հնոցն այնպէս թողեալ»:*

Իր տպագրած փոքրածաւալ գրքերի յիշատակարաններից գիտենք, որ Աբրահամ Թերզեան-Յօհաննեանը ծագումով Ակնեցի հարուստ ամուրի էր: Կեանքի վերջին տարիներին «բարի յիշատակ» թողնելու համար, 1824 թ. Հասան Փաշա խանում թաղամասում բացում է իր տպարանը, ուր Յուլիսի 21-ին հրատարակում է իր առաջին գիրքը՝ «Յանախապատում» ճառերի ժողովածուն, որի տիտղոսաթերթում նշում է «Արդ-

⁷ Պողարեան Ն. Եսայ., Հայ գրողներ Ե-ժէ դար, Երուսաղէմ, 1971, Յովհաննէս Եզնկացի Պլուզ (1240?-1293), էջ. 320-323, Terian A., Patriotism and Piety in Armenian Christianity. The early panegyrics on Saint Gregory, New York, 2005, pp. 79-96:

եամբք և ծախիւք առն ազգասիրի և բարեպաշտի ակնեցի մահտեսի Յօհաննէան մահտեսի Աբրահամ ամիրայի յուրում իսկ սեփական գործարանի»։ Իգ (23) ճառերի նիւթերի այբբենական ցանկը (էջ. 387-400), Գրիգոր Լուսաւորչին նուիրուած ներբողը «ի Պաղտասար է» 1158 (=1709) (էջ. 372-383) սկզբնատառերով եւ հատորի «առաջին» սրբագրողը յայտնի հրատարակիչ, խմբագիր եւ սրբագրիչ Պաղտասար դպիր [Գրիգորեան Կեսարեան] Կոստանդնուպօլսեցին է (1683-1768)⁸։

Գրքի սրբագրողներից է նաեւ «չնչին Թագուոր Ասլանեան»-ը ։

Սրանք են Հայկ Դաւթեանի *Մատենագիտութեան մէջ թուարկուած՝ Աբրահամ ամիրայ Թերզեանի կարճատեւ կեանքի ընթացքում*, իր փոքրիկ տպարանում տպագրած գրքերի ցանկը (Յուլիս 21, 1824 Մարտ, 24 1828)։

- 462. Գրիգոր Լուսաւորիչ, Գիրք, որ կոչի Յանախապատում, 1824, 463. Իգնատիոս Սեւեռնցի, Մեկնութիւն սրբոյ աւետարանին, որ ըստ Դուկասու, 1824, 465. Յակոբ Մըծբնայ Հայրապետ, Գիրք, որ կոչի զգօն, 1824, 466. Ներսէս Շնորհալի, Գիրք, որ կոչի Յիսուս Որդի, տպակից Գրիգոր Մագիստրոս, «Տաղասացութիւն», 1824, 494. Ներսէս Համբրոնացի, Մեկնութիւն սրբոց երկուտասան մարգարէից, 1825, 495. Ներսէս Շնորհալի, Թուղթ Ընդհանրական, տպակից «Իրուատ պատմագրաբար ի յաստուածահրաւէր փոխումըն սրբազնասուրբ հայրապետին մերոյ Տեառն Ներսէսի Կլայեցոյ», 1825, 496. Ներսէս Շնորհալի, Յովհաննէս Երզնկացի, Մեկնութիւն սուրբ Աւետարանին, որ ըստ Մաթէոսի, 1825, 531. Բարսեղ Ճոն, Մեկնութիւն սրբոյ Աւետարանին, որ ըստ Մարկոսի, 1826, 539. Սարգիս Շնորհալի Իմաստասէր, Մեկնութիւն եօթանց թղթոց կաթուղիկեայց, 1826:

Աբրահամ Թերզեանը, 1826 թ. ձեռնարկում է «Մարկոսի աւետարանի մեկնութեան» հրատարակումը, սակայն տպագրութիւնը չաւարտած, վախճանւում է։ Տպագրութեան տիտղոսաթերթը նշում է. տպ. «Մհտ. Աբրահամ աստուածասէր եւ մեծահաւատ հոգեւոյս ամիրայի Թերզեանց Ակնեցոյ»։ Եղբայրը՝ Երամ աղան, եղբօր կամքը լիովին կատարած լինելու համար, աւարտում է գրքի երկրորդ հատորի տպագրութիւնը նոյն տարում եւ սկսում նաեւ Սարգիս Շնորհալու «Մեկնութիւն եօթանց թղթոց կաթուղիկեայց» տպագրումը, որի տիտղոսաթերթը արձանագրում է նրա մահուան ստոյգ թուականը՝ «Թերզեանց մհտ. Աբրահամ ամիրայ Ակնեցոյ առ տէր հանգուցելոյ ... Յամի տեառն 1826 սեպտեմբ. Ա սկսեալ և ի 1828 մարտի 24 աւարտեալ»⁹։

«Սրբոյ Հօրն Մերոյ Գրիգորի Լուսաւորչի Յանախապատում հառք և աղօթք» չորրորդ (նախապէս Գ) հրատարակութիւնը լոյս է տեսնում «ի տպարանի Սրբոյն Ղազարու, յամի 1838 թ.¹⁰։ Այս տպագրութիւնը վերահրատարակում է 1954 թ.¹¹։ Երկու հրատարակութիւններն էլ աւարտուում են այս յաւելուածով. «Աղօթք յորժամ յորոգայք անկանիցի ոք գոր ասացեալ է Սրբոյն Գրգորի Լուսաւորչին». օրհնեալ է անբաւ մարդասիրութիւն քո»։ Երկու տպագրութիւնների «Յառաջաբան»-ի մուտքերը տարբեր են, բացի վերջաւորութիւնից, որտեղ տեքստի սկզբնաղբիւրի վերաբերեալ ուշագրաւ տեղեկութիւն է հաղորդում, որը կարօտ է մեկնաբանութեան.

«Արդ հաւատարիմ տպագիրս օրինակ գրեալ էր ի ՌՃԻԲ [=1122] գաղափարեալի

⁸ «Հանրագիտարան հայ գրատպութեան եւ գրհարուեստի», գլխ. խմբ. Յովհաննէս Այվազեան, Երևան, 2015, էջ 868-870, Ստեփաննէան Գ., «Կենսագրական բառարան», Նշում աշխ. հտ. Գ, էջ 235-236:

⁹ Կորկոտեան Բ., «Հայ տպագիր գիրքը Կոստանդնուպօլսում», (1567-1850 թթ.), Երևան, 1964, էջ 90-92, Թէոդիկ. «Տիպ ու տառ», Կ. Պոլիս, 1912, էջ 71-72:

¹⁰ Ղազիկեան Ա., Նշում աշխ. էջ 464-465, Գալթեան Հ., ՀԳ 1800-1850, Հմմտ. 907, էջ 225, Nersessian V., Catalogue, no. 516, p.126.

¹¹ Սրբոյ Հօրն Մերոյ Գրիգորի Լուսաւորչի Յանախապատում ճառք եւ Աղօթք, Վեներաբլ, 1954 (Մատենագրութիւն նախնեաց: Գրիգոր Լուսաւորիչ):

հին երկաթագիր օրինակէ գրելոյ ի թուիս 32Ը [=378] որ պահէր յարկեղս գրոց ի Սիս ֆաղափ, որպէս ազդ առնէ յիշատակարանն. և քննեալ մեր մանրախուզի զգաղափարն վկայեմք երկիւղածութեամբ գրչին յաւնայ լայլակ առեալ զհաւասարն ըստ յամենայնի նշանախեցից հնագիր օրինակին, մինչև զմիոյ կամ զերկուց տառիցն անգամ որ ի հնութենէ խանգարեալ էին ի հինն՝ դատարկ թողիլ զտեղին: Առ հնութեան դարձեալ քանզի թուրք անկեալ էին ի սկզբանէ, անտի սկիզբն առնէ օրինակս մեր, ուր մեք ազդ արարեալ եմք ի մերում տպագրութեան յէջն 19. և զնախնի պակասորդն յաշողեցաւ մեզ յայլմէ օրինակէ լրացուցանել. որ թէպէտ և նորագիր ի ՌՉԴ [=1625] այլ հարազատութեամբն ոչ ինչ նուազ քան զգաղափար երկաթագիր օրինակին:

Իսկ զվաստակ մեր ի սոյն, թէպէտ և դուզնափեայ, նուիրեմք աւասիկ ի նորին երանելոյ Հօր ֆաղր յիշատակ և յորոցն նորա ի փրկաւէտն վայելս. և այս մեզ միակ տրիտուր փոխարինէ և յառաջիկայսն խրախոյս ֆաշալերութեան»:

Կարեւոր է ընդգծել, որ վերոյիշեալ տեղեկութիւնը հաղորդում է, որ ՌՉԴԻ [= 1122 թ.], Սիսում ընդօրինակուած «Յաճախապատում»-ներից մէկը ընդօրինակուած ունի հետեւեալ յիշատակարանը. «Կատարեցաւ գիրքս՝ որ կոչի «Յաճախապատում», էր օրինակ սորին 32Ը=ԳՃՃԸ (=378) տարի էր առաջի թուականին Հայոց ի Լուսաւորչէն [378+551=929]¹²: Բայց հնագիր օրինակին զուգահեռ «զմիոյ կամ զերկուց տառիցն անգամ, որ ի հնութենէ խանգարեալ էին ի հինն՝ դատարկ» և «քանզի թուրք անկեալ էին ի սկզբանէ», խմբագիրները տպագրութեան մէջ տողատակ տալիս են ծանօթագրութիւններ, ինչպէս՝ «սկիզբն ընտիր օրինակին», «միոս օրինակն եռամացան (փոխ. խանտացան)» («միւսն յանառակութիւն» (փոխ. ցանկութիւնս), «միւսն պատրաստեալ (փոխ. պատուեալ)¹³:

Յաւօք, բոլոր տարրնթերցումները մատնանշում են առանց յիշելու ձեռագրերի համարները կամ գրութեան թուականները: Նաեւ պարզ չէ, թէ ինչո՞ւ էին խմբագիրները անտեսում հին օրինակները եւ տպագրութեան համար ընտրում 1673 թ. ձեռագիրը:

«Յաճախապատում» ճառերի առաջին եւ առ այսօր միակ գիտական տեքստի պատրաստութեան նախապատիւը պատկանում է Մայր Աթոռի միաբան Արշակ Տէր-Միքէլեանին: 1894 թ. Մայր Աթոռ Ս. էջմիածնի տպարանից լոյս տեսաւ նրա «Մրբոյ Հօրն մերոյ Երանելոյն Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում ճառք Լուսաւորք»-ը՝ յառաջաբանով, համեմատութեամբ եւ ծանօթութիւններով¹⁴:

Հեղինակն իր առաջաբանի մէջ տեղեկացնում է, որքան ժամանակ որ չկայ Ագաթանգեղոսի Պատմութեան գիտական տեքստը, անհնարին է պատրաստել «Յաճախապատում»-ինը՝ «քանի որ ցայժմեան հրատարակութիւնի չափից դուրս լիքն են սխալներով»:

Իր բնագրի ճշտութիւնը վերականգելու համար, նկատի է առել Ս. էջմիածնի մատենադարանում գտնուող հինգ գրչագրերին. ա). Nr. 1655 (1293 թ., կրկնօրինակուած 1691 թ.-ին), բ). Nr. 1658՝ (կրկն. է առաջինի), գ). Nr. 1485 (1706 թ., այս օրինակը նման է Վենետիկի առաջին հրատարակութեանը), դ). Nr. 1486 (սկսած 1141 թ. եւ աւարտուած 1151 թ.), ե). Nr. 1458 (1216 թ. եւ Վենետիկի առաջին եւ Կ. Պոլսի երկրորդ հրատարակութիւնները)¹⁵:

Ըստ Վազգէն Համբարձումեանի, որը ճառերի առաջին եւ միակ արեւելահայերէն թարգմանութեան հեղինակն է, այն կարծիքին է, որ «անկախ քննական աւելի լիար-

¹² Գուրեան Արք. Ե., Պատմութիւն հայ մատենագրութեան, Երուսաղէմ, 1933, էջ 417:

¹³ Մրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի Յաճախապատում, Նշում աշխ. էջ 19, 22, 27:

¹⁴ Ղազիկեան Ա., Նշում աշխ., էջ 465-467:

¹⁵ Տէր-Միքէլեան Ա., Նշում աշխ., էջ ԺԲ:

ժէք բնագիր կազմելու այն ձգտումից, որ ունեցել է Ա. Տէր-Միքէլեանը, ինչ-ինչ պարագաներում, մանաւանդ բնագրի ճիշդ վերականգման հետ կապուած, զիջում է յատկապէս վենետիկեան տպագրութեանը»¹⁶: Գերմաներէն թարգմանութիւնը պատկանում է M. Schmid-ին¹⁷:

Աւետ Զընթլումեանի տպարանում տպագրուած գրքերը

Կալկաթայում Աւետ Զընթլումեանի տպարանում հրատարակուած տիտղոսների մատենագիտական ցանկերից պակասում է յիշատակութիւնն այս նորագիւտ հատորի: Օգտուելով Հայկ Դաւթեանի եւ Շ. Շահնազարեանի «Աւետ Զընթլումեանի տպարանում տպագրուած գրքեր»¹⁸ հաղորդագրութիւնից, ժամանակագրական կարգով ներկայացնելու ենք սոյն տպարանում տպագրուած գրքերի ցանկը: Տիտղոսներին ընկերակցող համարների յղումները պատկանում են Դաւթեանի մատենագիտութեանը:

1. 165. Նոր Տեարակ Այբուբենական...: Հարիւր երեսուն և եօթներորդ հայրապետութեան աթոռոյն սրբոյ էջմիածնի, տեառն Եփրեմ Հայոց կաթողիկոսի [Ա Ջորագեղցի]¹⁹, Կալկաթա, տպ. Աւետ Զընթլումեանի, 1811: 2. 166. Տասն պատգամք: Կալկաթա, տպ. Աւետ Զընթլումեան, 1811: 3. 189. Ժամագիրք համառոտ վասն մանկանց... Աշխ. Զընթլում. Աւետ Խօջիջանեան կոչեցելոյ: Կալկաթա, տպ. Աւետ Զընթլումեանի, 1812: 4. 206. Աւետեան Զընթլում, Տեարակ որ կոչի Ծաղկակալ: Կալկաթա, տպ. Աւետ Զընթլումեան, 1813: 5. 217. Գիրք պատմութեան, որ կոչի Պղնձէ քաղաք: Տպագրեալ էր ի թուին հայոց 1198 [= 1749], ի տպարանի Զնչին Ոհաննէսի: Իսկ այժմ վերստին տպագրութեամբ ի լոյսածաւ արդեամբք և ծախիւք յատուկ օգնական լինողացն մերազնէից: Կալկաթա, տպ. Աւետ Զընթլումեանի, 1814: 6. 218. Գիւտ կովային պիսակին: Թարգմանեալ յանգղիական լեզուի ի հայ բարբառ աշխ. յումեմնէ բանասիրէ: Կալկաթա, տպ. Աւետ Զընթլումեանի, 1814: 7. 219. Զենոբ Գլակ, Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ: Առաջին տպագրումն գրքոյս եղեալ է ի Կ. Պօլիս քաղաքի ի թուին հայոց 1168 [= 1719]: Իսկ այժմ վերստին տպագրեցաւ արդեամբք և ծախիւք զուարդամիտ և առատաձեռն ազգիս մերոյ ի Կալկաթա: ...Աշխ. Զընթլում Աւետեանի: Կալկաթա, տպ. Աւետ Զընթլումեանի, 1814: 8. 220. Պարտէզ Հոգեւոր: ...Թարգմանեցեալ ի Հայկական լեզուէ ի Անկլիացոց բարբառ ի Զընթլում Աւետ Խօջիջանեանի կոչեցելոյ: Արդեամբք և ծախիւք նոյն Զընթլում Աւետեանի: Յամի Տեառն 1814, ի տպ. Աւետ Զընթլումեանի ի Կալկաթա: [Select prayers and pious reflections collected from different authors and translated from Armenian to English by Gentloom Aviet. Calcutta, Anno Domini, 1814]: 9. 237. Աղանուրեանց Յարութիւն, Գիրք սաղմոսաց Դարթի, որդոյ Յեսսեայ: Հոմերական ոտիւք չափեալ ի Յարութիւն Սահակեան աղանուրեանց Նոր Զուղայեցոյ: Կալկաթա, տպ. Աւետ Զընթլումեան, 1815: 10. 238. Խոճենց Մարգար, Համառոտ որպիսութիւն եկեղեցոյ: Կալկաթա, տպ. Աւետ Զընթլումեանի, 1815: 11. 265. Աւետեան Զընթլում, Գիրք նոր, որ կոչի Նորատունկ բուրաստան: ...Հտ. Ա (Հայ եւ անգլ.) Կալկաթա, տպ. Աւետ Զընթլումեանի, 1816: 12. 266. Եղիշէ, Գիրք, որ կոչի պատմագիրք: ...Առաջին տպագրութիւն գրքոյս եղեալ էր ի Կ. Պօլիս քաղաքին ի թուին Հայոց 1213 (= 1764): Աշխ. Զընթլում Աւետեանի:

¹⁶ Սուրբ Գրիգոր Լուսատրիչ, Յանախապատում ճառեր, Թարգմանութիւնը, առաջաբանը, ծանօթագրութիւնները՝ Վազգէն Համբարձումեանի, Թեհրան, 2003, էջ 11:

¹⁷ Տէս Schmid M., Reden und Lehren des heiligen Gregorius des Erleuchters, Patriarch V. Armenien, Regensburg, 1872:

¹⁸ Դաւթեան Հ., ՀԳ., Նշուած աշխ., Շ. Շահնազարեան, «Մատենագիտական նորոյթներ», ԲՄ 5 (1960), էջ 522-526:

¹⁹ Ըստ Օրմանեանի հաշուարկութեան, Եփրեմ Ա Ջորագեղցին (1809-1830) 119-րդ հայրապետն է եւ ոչ թէ 137-րդ: Պէտք է ենթադրել, որ տիտղոսի հաշուարկումը սկսում է նախատառեղական շրջանի հայրապետներից մինչեւ Գրիգոր Լուսատրիչ:

Կալկաթա, տպ. Աւետ Զընթլումեանի, 1816: 13. 290, Աղանուրեան Յարութիւն, Գիրք դաւանութեան հաւատոյ ամենասուրբ երոգողութիւն և միասնական աստուածութիւնն ի հայր և որդի և սուրբ հոգին: Կալկաթա, տպ. Աւետ Զընթլումեանի, 1817: 14. 374. Յակոբ Կարնեցի, Մեկնութիւն Երգ Երգոց անուանեալ բանիցն Սաղոմօնի: Կալկաթա, ի տպարանի երկցունց եղբարց հարազատաց Աւետի և Յովհաննիսի Զընթլում Աւետեանց, 1820:

Կալկաթայում 19-րդ դարի առաջին կէսին գործել են Աւետ Զընթլումեանի (Խօջի-ջանեան, 1811-17) եւ նրա որդիներ Աւետ եւ Յովհաննէս Զընթլումեանի տպարանները (1820)²⁰: Աւետ Զընթլումեանն իր 1812 թ. տպագրած Ժամագրքի յիշատակարանում գրում է հետեւեալը.

«... յանձն առի անձամբ իմով զշարչարանս յանձն կրել՝ և հաստատել զտպարանս Հայոց՝ ի պարծանս ազգիս իմոյ, թէպէտ շարչարանս բազում լինելոյ՝ երբեմն ստրկանայի, բայց պտուղն նորին տեսնելով ցնծայր սիրտն իմ... Նախ որոյ ջանս եռապատիկ լինիւր ոչ հայելով զշարչարանս, և զծախս սոյն գործարանիս և ի թախանձմանէ բարեսէր արանցս այսոցիկ տպեցի **ՂԱՅՐՈՒԲԵՆԱՐԱՆԸ** յետ այնու օժանդակութեամբ և ի թախանձմանէ բարեսէր արանցս այսոցիկ ազնուաց՝ զորոց անունքն դրոշմեալ են ի ներքոյ տպեցի **Ազդարարն, Տարեկան տօնացոյցն, Պատմութիւն սրբոյն Յոհաննու Ոսկեբերանի**²¹՝ յուսկ յետոյ **Ժամագիրքս** ոչ որպէս յառաջն կայր, որ տպագրեալ էր ի քաղաքին Կոստանդնուպօլսոյ, այլ այս վասն մանկանց, նաև եղի զԴանիէլին, և Թուղթք սրբոյ Պօղոսի Առաքելոյն զոր յաւուր Ծննդեանն և Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընթեռնուն մանկունքն ի յեկեղեցւոջն²², և ոչ եղի զայն զոր վայելէ քահանայիցն ասել, վասն զի **Ժամագիրքս** այս վասն մանկանց ընթեռնելոյ տպեցի սակա որոյ խնդրեմ թարց մեղադրելոյ ունիլ զիս»²³:

Ո՞վ է Յաճախապատում ճառերի հեղինակը

Մինչեւ այսօր բոլոր հին եւ նոր հրատարակութիւնները վստահօրէն իրենց տիտղոսաթերթերում յայտարարում են «Գիրք, որ կոչի Յաճախապատում ասացեալ սրբոյն Հօրն Մերոյ երանելոյն Գրիգորի Լուսաւորչին», հակառակ որ բազմաթիւ հայ գրականագէտներ ճառերը վերագրում են Մեսրոպ Մաշտոցին: Մանուկ Աբեղեանն այն կարծիքին է, որ (որը շատ սովորական երեւոյթ էր հին ժամանակներում) «գրուածքին աւելի մեծ հեղինակութիւն ընծայելու համար, եւ որպէսզի որեւէ կասկած հեղինակի մասին փարատուի, ամէն մի առանձին ճառի վրայ Ս. Գրիգոր անունը կրկնուել է իբրեւ վերնագիր»՝ («Երանելոյն սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի») ²⁴: Թոպերթ Թոմսըն իր «Վարդապետութիւն Սրբոյն Գրիգորի» անգլերէն թարգմանութեան մէջ գրում է. «այս ճառերի վերագրումը Գրիգոր Լուսաւորչին, մտացածին է, քանի որ դրանք շարադրուած են հայերէն լեզուով: Դրանք վերագրուում են նաև Մեսրոպ Մաշտոցին, սակայն դրանց գրութեան թուականը եւ հեղինակի ինֆոնթիւնը դեռ մնում են անորոշ»²⁵: Զամինեանը վերի բացայայտ

²⁰ **Ստեփանեան Գ.**, Կենագրական Բառարան, Նշուած աշխ., էջ 135-136, Հայ գրատպութիւն եւ գրհարուեստ, Նշուած աշխ., էջ 499:
²¹ Այս չորս տիտղոսներից ոչ մէկը չեն գրանցուած Հ. Դաւթեանի **ՏԳ** նշուած աշխատութեան մէջ:
²² Այս ընթերցումները կարդացում են Հայ եկեղեցում՝ Սուրբ Ծննդեան եւ Զատիկուայ նրագալոյցի երեկոյեան պատարագներում:
²³ **Դաւթեան Հ.**, Նշուած աշխ. հմմտ. 189, էջ 49, **Շահնագարեան Շ.**, Նշուած աշխ., էջ 522-523:
²⁴ **Աբեղեան Մ.**, Հայոց հին գրականութեան պատմութիւն, Գիրք առաջին, Երեւան, 1944, էջ 119-120: **Ֆեթթեր Պ.**, Հայկական աշխատութիւններ, Թարգ. Յ. Տաշեան, Վիեննա, 1895. էջ 69:
²⁵ **The Teaching of Saint Gregory.** Translation, Commentary and Introduction by **Robert W. Thomson**, New York, 2001, p. 16, note 29. Ասանդութիւնը սուրբ Գրիգոր Լուսաւորչին է վերագրում՝ Հաւատոյ հանգանակի վերջաւանակցած «Իսկ մեր փառաւորեացոյց»-ը, որը անգլիացի արք. **Ա. Ե. Բերն** [A. E. Burn] իր մենագրութեան մէջ նուիրուած **The Council of Nicaea. A memorial for its sixteenth centenary** (London 1925), Գրիգոր Լուսաւորչի

խոչընդոտը հարթելու համար այն կարծիքն է յայտնում, որ «Յանախապատում» գրքի իսկական հեղինակը ս. Գ. Լուսավորիչն է, իսկ անոր թարգմանիչը՝ թերեւս յաւելուածներով, Մեսրոպ Մաշտոց»։ «Յանախապատում» ճառերը Գրիգոր Լուսավորչին վերագրելու կամ իր անունով տպագրելու պատճառը նախ՝ «երախտագիտութեան զգացմունքն» է թելադրում եւ Ագաթանգեղոսի այն վկայութիւնն է թէ՛ «ապա, յետ այսպիսի գործոց՝ առանել բարձրագոյն վարդապետութեամբ սկսեալ երանելոյն Գրիգորի՝ նաոս յանախագոյնս, դժուարապատումս, շնորհագիրս, յարդարեալս ի զօրութենէ և ի հիւրոյ գրոց մարգարէականաց լի ամենայն հաշակոփ կարգեալս և յօրինեալս ւետարանական հաւատոցն հշմարտութեան»²⁶։ Այս վկայութիւնը, որը համարում է «Յանախապատում» ճառերը Գրիգոր Լուսավորչին վերագրելու գլխաւոր խարիսխը, Եղիշէ Պատրիարք Դուրեանը համարում է մէջբերում՝ քաղուած «Վարդապետութիւն Սրբոյ Գրիգորին» կոչուած գործից, որը մաս է կազմում Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց» երկի²⁷։

Գառնիկ Ֆնտզլեանը, Կորիւնի «Վարժ Մաշտոցի»-ին նուիրուած աշխատասիրութեան մէջ գրում է. «Յանախապատում»-ի ճառերը Մաշտոցի «ամենասփիւռ ուսուցման գրաւոր պսակն ու կատարումն» են, իսկ Ագաթանգեղոսի հատուածը Գրիգորի մասին բանաբաղուցիւն է Կորիւնի «Վարժ Մաշտոց»-ի սոյն հատուածից՝ «սկսեալ երանելոյն Մաշտոցի նաոս յանախագոյն, դիւրապատումս, շնորհագիրս, բազմադիմիս ի զօրութենէ և ի Հիւրոյ գրոց մարգարէականաց կարգել և յօրինել ամենայն հաշակոփ ւետարանական հաւատոցն...»²⁸։ Եթէ «Յանախապատում» ճառերի հեղինակը Գրիգոր Լուսավորիչն է, ապա հաստատապէս պիտի ենթադրել, որ այն առաջին անգամ շարադրուել է յունարէն լեզուով եւ յետագային թարգմանուել հայերէն, որի համար ոչ մի հիմք չկայ։ Երկու հատուածների բառաքննութիւնը եւ համեմատութիւնը ակնյայտ է դարձնում, որ Ագաթանգեղոսի հատուածը բանաբաղուցիւն է Կորիւնից, որը հեղինակը որակում է՝ «անհարակ բանաբաղ» կամ հետեւանք «անխելօ օրինակողներ»-ի զօրեղ ապացոյց, որ ճառերի հեղինակը Մաշտոցն է²⁹։ Կորիւնը վկայում է նաեւ, որ Մաշտոց Արեւմտեան կողմերում «բազում շնորհագիր մատեանս զհարցն եկեղեցոյ ստացեալ, ծովացուցնէր զվարդապետութեանն զխորութիւն, և լցեալ զեղոյր ամենայն բարութեամբ»։ ԺԱ-րդ ճառի մէջ կայ հետեւեալ վկայութիւնը՝ «իմացուցանէր լսողաց զբան հանճարոյ», որ «Գիրք Առակաց»-ի առաջին գլխի առաջին համարի բացատրութիւնն է. «ճանանչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանն հանճարոյ»³⁰։ Շատ բնական է այս վերջիշումը, քանի որ գիտենք, որ Մաշտոց հէնց ինքն էր Աստուածաշնչի Առակաց գրքի թարգմանիչն ու գրողն իր ստեղծած տառերով գրուած առաջին հայերէն նախադասութիւնը։ «Յանախապատում» ճառերը հոգեւոր խրատներ են քրիստոնէական ուսմունքի, դաւանութեան ու բարոյականութեան մասին, որ նպատակ ունեն ուսուցանել աստուածապաշտութիւն, ուղիղ դաւանանք եւ յորդորել ողջախոհութիւն, մաքուր կենցաղավարութիւն, եւ որ Մաշտոց խրատական թղթեր է առաքել «ընդ ամենայն գաւառս»։ Ճառերի համար Կորիւնի կիրառած ածականներից են «շնորհագիրս» ածականը՝ հոգեկից, հոգեշահ նշանակութեամբ, իսկ «Վարքի» երկրորդ տարբերակում կիրառուած է «շնորհագիրս» ածականը։ Այս նշանակում է, որ Մաշտոցը, նրանց, որոնց նա համարում էր «տխմարներ ու մարմնական բաներով» զբաղուողներ, յորդորները մատուցում էին ոչ թէ գրաւոր,

այս յաւելումը կոչում է “Hymn of the Armenian Church” (p. 143) անուամբ։

²⁶ Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Աշխ. Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տիփլիս, 1909, էջ 466։

²⁷ Միմասեան Արդ. Ի. (ամփոփեց), Ուրուագիծ հայ մատենագրութեան, Գուշակեան Արք. Թ. (հետետութիւն) Եղիշէ Դուրեան Սրբազանի, Երուսաղէմ, 2002, էջ 23-24։

²⁸ Ֆնտզլեան Գ., Կորիւն Վարժ Մաշտոցի։ Ուղղեալ եւ Լուսաբանեալ, Երուսաղէմ, 1939, էջ. 50-51։

²⁹ Անանեան Պ., Վարժ Սուրբ Մաշտոցի, Վեներիկ, 1964, էջ 126-127, Արամեան Քհնյ. Մ., «Գրիգոր Լուսավորչի «Յանախապատում»-ը, Գանձասար, Դ (1993), էջ 134-164։

³⁰ Կորիւն, Վարժ Մաշտոցի, Նշում աշխ. էջ 68։

այլ բանաւոր կերպով: Ա. Տէր-Միքէլեանի ինը պատճառաբանութիւններից մէկը՝ թէ ինչո՞ւ ճառերը պէտք է վերագրել Ս. Գրիգոր Լուսաւորչին, այն է, որ «Յանախապատում»-ը փարոզուել է այնպիսի ժամանակ, երբ յոյները դեռ հեթանոս էին, ինչպէս տեսնում ենք Ը նախից», ամենեւին հասկանալի չէ³¹: Բազմաթիւ անգամներ ճառերի հեղինակն իր խօսքն ուղղում է ոչ նորադարձ հաւատացեալներին, այլ արդէն վաղուց հաստատուած կրօնի հետեւորդներին: Կորիւնը «դպրութեան գրի» յօրինման վերաբերեալ գրելիս, ունի այս ուշագրաւ տողը «Վասն յօրինուածոց» ճառի մէջ՝ «Նա եւ զֆննութիւն արարածոց յօրինեաց որպէս զգիր դպրութեան եւ եղ անուանս, զի անուանֆն զընտրութիւնն տայցեն զգրոյն ի վիմեանց զորոշումն. եւ գիրն զբարիս անուանն կարդասցէ»³²: Այս տողերը խիստ պատշաճ են Մաշտոցի ուսուցողական ոճին:

(Ճառ Դ) - «Շնորհալից մտաց և հաւատացելոց սակաւ բանք խրատուց բաւական են յուղղութեան»:

(Ճառ ԺԴ) - «Որպէս ամենայն հաւատացելոց է քաջայայտ»:

(Ճառ ԺԶ) - «Շնորհք ընծայենի ժողով հաւատացելոց, որպէս ամենեցուն է քաջայայտ»:

(Ճառ ԻԲ) - «Որ և մեզ ականդեցաւ այս հոգևոր երգ»:

(Ճառ Ե) - «Յայտնի է իմաստնոց սրբոց, որ ունին զգիտութիւն ի գրոց մարգարէից և առաքելոց և վարդապետաց»:

Հայոց կանոնագրքի միջնադարեան խմբագրութիւններից մէկում կայ «Երանելոյն Մեսրոպայ հայոց վարդապետի» խորագրով մի փոքրիկ գրուածք, որն, անտարակոյս, հատուած է աւելի ընդարձակ մի բնագրից: Բանասէր Ն. Ակիկեանը, հրատարակելով այդ գրուածքը, համոզուած է եղել, որ այն «առանց տարակոյսի հանուած է Մաշտոց վարդապետի մէկ ճառէն»³³: Ըստ Լ. Խաչիկեանի՝ քաղուածքը վերաբերում է հեթանոսական շրջանից մնացած բարքեր ունեցողներին, որոնց եկեղեցին «նզովեալ են ի սուրբ եկեղեցոյ եւ արտաքս ընկեցեալ յաստուածային հրամանց»: Եթէ, գրում է Խաչիկեանը, նկատի առնենք այս բեկորի պարզ շարադրանքի ուսուցողական բնոյթը՝ («մի վարել հմայիւք», «մի երթալ զհետ երազոց», «մի ոք զՅովսէփ եւ զԴանիէլ բերցէ ի մէջ»), կարելի չէ յանգել այն եզրակացութեան, որ դրանք ոչ թէ Մաշտոցի մի ճառից են, այլ նրա բազմաթիւ «խրատագիր եւ զգացուցիչ շրջաբերական թղթերից», որոնք ուղարկուել էին «ընդ ամենայն գաւառս»: «Յետագայի որոնումներով, թերեւս երեւան գան նման կարգի նոր հատուածներ, գուցէ նաեւ ամբողջական թղթեր»³⁴: Այս կապակցութեամբ մեծանուն հայագէտ Լ. Խաչիկեանն իր մի այլ յօդուածի մէջ, հայկական կանոնագրքի ձեռագրերում հանդիպող Գրիգոր Պարթեւին կամ Լուսաւորչին վերագրուած «Հարցումը», կամ «Յանկ Կանոնաց Լուսաւորչին», կամ «Կանոն սրբոյն Գրոգորի Պարթեւի, դարձեալ հարցումն ու պատասխանիւք նորա», արժէքաւոր երկը, որը վերագրուել էր Գրիգոր Լուսաւորչին՝ նրան աւելի մեծ հեղինակութիւն տալու նպատակով, փաստում է, որ այն պէտք է վերագրել Մեսրոպ Մաշտոցին: Գ. Գալէմքերեանը, Ն. Ադոնց, Մ. Աբեղեանը եւս ապացուցել են, որ «Յանախապատում» ճառերի նման, այս երկը եւս պատկանում է գրերի ստեղծողին՝ հայ մատենագիտութեան հիմնադիր Մեսրոպ Մաշտոցին: Մաշտոցի առաքելութեան մէջ մեծ տեղ է բռնում քարոզչութիւնը: Յայտնի է, որ մինչեւ տառերի գիւտը, նա շրջել ու քարոզել է Հայաստանի այն գաւառներում (Մարաց կողմերում, Գողթնում,

³¹ Տէր-Միքէլեան Ա., Նշում աշխ., էջ է:

³² Սրբոյ Հօրն Մերոյ Գրիգորի Լուսաւորչի Յանախապատում ճառք եւ Աղօթք, Վենետիկ, 1954, Ճառ է, էջ 72:

³³ Ակիկեան Ե., ՀԱ (1958), էջ 378-381:

³⁴ Խաչիկեան Լ., «Մեսրոպ Մաշտոցի ծննդեան 1600-ամեակը» Աշխատութիւններ հտ. Ա, Երևան, 1995, էջ 53, ԲՄ. 7 (1964), էջ 11-24:

Մինիբրուժ, Բիւզանդիայի տիրապետութեան տակ գտնուող հայկական շրջաններում), որտեղ քրիստոնէութիւնը դեռ չէր արմատաւորուած. շրջաններ, ուր քրմական դասը դեռ պայքար էր մղում նոր հաւատքի դէմ: Որ իրօք Մաշտոցն զբաղուել է հեթանոսական անհաւատքի դէմ, այդ մասին վկայում է Հայոց կանոնագրքի խմբագրութիւններից մէկի մէջ տեղ գտած «Երանելոյն Մեսրոպայ վարդապետի» կոչուած մի հակիրճ բնագիր, որն ուղղուած է հեթանոսական կրօնի անկապտելի մասը կազմող հմայութիւնների դէմ: Ն. Ակինեանը հրատարակել է այդ բնագիրը մի քանի ձեռագրերի բաղադատութեամբ՝ «Խօսք ընդդէմ հմայից» խորագրով³⁵: Եւ, քանի որ քարոզչական այդ եռանդուն գործունէութեան ղեկավարը Մեսրոպ Մաշտոցն էր, «նա էր ամենահմուտ քարոզիչը, նա միայն կարող էր ըմբռնել նման մի երկ ստեղծելու անհրաժեշտութիւնը»: Գրիգոր Պարթեւին վերագրուած «Հարցումը» որպէս հայ մատենագիտութեան երախայրիք», պէտք է վերագրել Մեսրոպ Մաշտոցին³⁶: Կորիւնը հաստատում է այս տեսակէտը՝ վրկայելով. «բազում շնորհագիր մատեանս զհարցն եկեղեցոյ ստացեալ՝ ծովացուցանել վարդապետութեանն զխորութիւնն»³⁷:

Այս ճառերն իրենց բովանդակութեամբ շատ տարբեր չեն Ս. Կիրեղ Երուսաղէմացու (315-387) «Կոչումն Ընծայութեան» ճառերից՝ երախայրից ուսմունքի վերաբերեալ եւ դրա հետ մէկտեղ ներկայացնում են Երուսաղէմեան եկեղեցու վարդապետութեան ամփոփ պատկերը՝ շարադրուած եկեղեցու պաշտօնական ներկայացուցչի կողմից³⁸: Կիրեղ Երուսաղէմացու «Կոչումն Ընծայութեան» 23 ճառերից 18-ի հայերէն թարգմանութիւնը կանոնական բնոյթ են ունեցել հայոց մօտ, ինչպէս վկայում է Ղազար Փարպեցին³⁹:

Երկու օտարազգի բանասէրներ՝ Ս. Վեբեր եւ Պ. Ֆետտեր, «Յաճախապատում» գրքի վերաբերեալ գրել են. «Հաւաքածոն, որ հայ եկեղեցական մատենագիտութեան հնագոյն յուշարձանն է, սակայն հեղինակը Գրիգոր Լուսաւորիչ չէ՛, այլ թերեւ Մեսրոպ Մաշտոց»⁴⁰:

Մատենագիտական յայտումներ

ԲՄ - Բանբեր Մատենադարանի, **ՀԱ** - Հանդէս Ամսօրեայ, **ՀԳ** - Ն. Ոսկանեան, Հայ գիրքը, 1501-1800, **ՀԳ** - Հ. Դաւթեան, Հայ Գիրքը, 1801-1850, **ՀՀՀ** - Հայկական Համառօտ Հանրագիտարան, **ՀՍՀ** - Հայկական Սովետական Հանրագիտարան, **Nersesian V.** - Catalogue of Early Armenian Books, 1512-1850, **ՊԲՀ** - Պատմա-Բանասիրական Հանդէս, **JRAS** - Journal for the Society of Armenian Studies, **REA** - Revue des Etudes Armeniennes

ԴՈԿՏ. ՆԵՐՍԷՍ ԱԻ. ԲՇՆՅ. ՆԵՐՍԷՍԵԱՆ

³⁵ Ակինեան Ն., ՀԱ (1958), էջ 379-381:

³⁶ Խաչիկեան Լ., Աշխատութիւններ, Հտ.Ա էջ 6, ԲՄ 7 (1964), էջ 301-330:

³⁷ Կորիւն, Վարձ Մաշտոցի, Նշուած աշխ., էջ 67:

³⁸ Քէօսոյեան Յ., Եկեղեցու հայրեր, վարդապետներ (IV-VIII դդ.), Երեւան, 2007, էջ 59-73:

³⁹ Քոլանջեան Ս., «Նորայայտ պատառիկներ Կիրեղ Երուսաղէմացու թ դարի մի գրչագրից», ԲՄ 5 (1960), էջ 201-238:

⁴⁰ S. Weber, *Ausgewählte Schriften der armenischen Kirchenvater (Hl. Mesrop Band)*, Munchen, 1927; Պ. Ֆետտեր, Հայկական աշխատութիւններ, Թարգ. Հ. Տաշեան, 1895: